

այնուհետեւ՝ զրպարտել զմայրս իմ, զհայաս-
տանեայցս սուրբ եկեղեցի... բայց Աստուած...
ազդեաց երիցս... Տեառն Յակոբայ Աստուածա-
բանի եւ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ, որ
պատժեաց զարժանիս պատժոյ՝ տալով ի քիւ-
րէկն զիս: Բայց ես զկնի բազում ժամանակի
ելեալ ի նմանէ բազմաւ աշխատութեամբ եւ
վնասու... եւս առաւել չարացեալ եղէ քան
զառաջինն... Արդ մնացեալ ի միջի նոցա ամս
25 յետոյ ամենագլխաւն Աստուած ... երաց
զաչս մտաց իմոց... եղէ... վերահասու, որ
մայրս մեր սուրբ եկեղեցի Հայաստանեայցս՝ է
ճշմարտապէս ուղղափառ եւ անբիծ... Սակս
որոյ եւ ես հաւաքեցի ի գրեանց զբանս բա-
զումս... եւ զԺողովեալսս զայսոսիկ՝ յովով
ստիպմամբ եւ մեծաւ պաղատանօք, ետու շա-
րադրել սիրելի եղբօրն իմոյ տիրացու Մանուէլի
փոքրկան... Նուաստագունեղ Յօհաննէս Սա-
փրիչ: Յիշատակարանին մէջ ալ (էջ 159)
կ'ըսուի " ... Արդեամբք եւ գոյիւք Ագուլեցի
սափրիչ Տիրացու Յօհաննէսին, որ ի չքաւորու-
թենէ իւրմէ՝ ընծայեաց զամենայն զոր ինչ ու-
նէր... յիշեսցիք... զի վերոյիշեալ սափրիչ
տիրացու Յօհաննէսն հանդերձ ծնողօքն Պաղ-
տասարիւ եւ Թագուհեաւ: Այլ եւ յիշել աղա-
չեմ զփոքրիկ Մանուէլս, զշարադրօղս գրքոյս,
զշարօղս եւ զցրուօղս կապարեայ գրոց...: "

Արդ վերոյիշեալ անձինք միշտ Սարգսի
քարոզներուն ներկայ կը գտնուէին՝ անոր բեր-
նէն ուղղափառական բառ մը կամ խօսք որսա-